ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

1.2025թ. առաջին կիսամյակի բյուջեի կատարողականի մասին

«ՀՀ 2025թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով Վայոց ձորի մարզպետի աշխատակազմին 2025թ.-ի առաջին կիսամյակի համար նախատեսվել են ծախսեր 2,474,850.8 հազար ՀՀ դրամ գումար: Փաստացի ֆինանսավորումը կազմել է 2,378,492.51 հազար ՀՀ դրամ կամ 96.11%-ով, որից

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կողմից տարածքային պետական կառավարման ապահովում միջոցառում.

2025թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով նախատեսվել են պահպանման ծախսեր 213,073.3 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 200,439.63 հազար ՀՀ դրամ:

Ֆինանսավորումը կատարվել է 94.07%-ով:

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում միջոցառում

2025թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով նախատեսվել են պահպանման ծախսեր 2,698 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 572.16 հազար ՀՀ դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 21.21%-ով:

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ

Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին.

2025թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով նախատեսվել է 42,000 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել 42,000 հազար ՀՀ դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 100 %-ով:

Մարզերին սուբվենցիաների տրամադրում ենթակառուցվածքների զարգացման նպատակով.

2025թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով նախատեսվել է 339,204.5 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել 305,995.12 հազար ՀՀ դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 90.21%-ով:

Մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ միջոցառում.

Նախատեսվել է 99,290 հազար ՀՀ դրամ: Փաստացի ֆինանսավորվել է 99,290 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

3. ՀՀ ԿԳՍՄ նախարարության պատվիրատվությամբ

Մշակույթի ոլորտ

Ըստ մշակույթի ոլորտի ծրագրերի 2025թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով ՀՀ Վայոց ձորի մարզի մշակույթի ոլորտի համար նախատեսվել է 8,020.5 հազար ՀՀ դրամ: Ֆինանսավորվել է 8,020.5 հազար ՀՀ դրամ: Ֆինանսավորվել է 100%-ով:

այդ թվում՝

Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ միջոցառում.

Նախատեսվել է 8,020.5 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 8,020.5 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

-Կրթություն

Հանրակրթական ուսուցման ծրագրեր

1.Տարրական ընդհանուր կրթություն.

2025թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով նախատեսվել է 550,970.1 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորվել է 537,342.6 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 97.53%-ով:

2.Հիմնական ընդհանուր կրթություն.

2025թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով նախատեսվել է 672,203.4 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորվել է 646,079.9 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է

96.11%-ով:

3.Միջնակարգ ընդհանուր կրթություն.

2025թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով նախատեսվել է 264,150.3 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորվել է 259,545.4 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 98.26%-ով:

***4.* ՀՀ պետական հանրակրթական բոլոր ուսումնական հաստատություններում ԲՏՃՄ ոլորտի (բացառությամբ մաթեմատիկայի) դասավանդող ուսուցիչների համար վարձատրության բարձրացված հստակ չափաքանակի սահմանում:**

2025թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով նախատեսվել է 65,625.9 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորվել է 65,625.9 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

5. ՀՀ գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող պետական ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչներին հավելավճարի սահմանում:

2025թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով նախատեսվել է 20,135.6 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորվել է 20,135.6 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 99.75%-ով:

6. Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների փոխհատուցում

2025թ.-ի առաջին կիսամյակի համար համար պետական բյուջեով նախատեսվել է 14,292.2 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 14,000.54 հազար ՀՀ դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 97.96%-ով:

7. Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչների հավելավճարներ.

2025թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով նախատեսվել է 2,936.4 հազար ՀՀ դրամ: Փաստացի ֆինանսավորվել է 2,936.4 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

8. 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության

ծրագիր

2025թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով նախատեսվել է 2,432.5 հազար ՀՀ դրամ: Փաստացի ֆինանսավորվել է 2,432.5 հազար ՀՀ դրամ:

9. Արտադպրոցական դաստիարակություն

2025թ.-ի առաջին կիսամյակի համար համար պետական բյուջեով նախատեսվել է 25,706.5 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 25,706.5 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%:

10. Ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում երաժշտական և արվեստի դպրոցներում.

2025թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով նախատեսվել է 3,934.9 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 3,934.9 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100.0%-ով:

11. Ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը

2025թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով նախատեսվել է 81,970.8 հազար ՀՀ դրամ; Փաստացի ֆինանսավորվել է 81,970.8 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

12. Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի և մանկավարժի վերապատրաստում

2025թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով գումար չի նախատեսվել:

13. Հանրակրթական դպրոցների, մանկապարտեզների և կրթահամալիրների գույքով ապահովում ծրագիր

2025թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով նախատեսվել է 22,462.1 հազար ՀՀ դրամ: Փաստացի ֆինանսավորվել է 20,612.1 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 91.76%-ով:

14. Կամավոր ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների որակի

բարձրացմանը

2025թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով նախատեսվել է 725.4 հազար ՀՀ դրամ: Փաստացի ֆինանսավորվել է 725.4 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100.0%-ով:

Նախադպրոցական կրթություն

15.Նախադպրոցական կրթության հասանելիության և որակի ապահովում

2025թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով նախատեսվել է 7,015 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորվել է 7,015 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

16. Նախադպրոցական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժների վերապատրաստում

2025թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով գումար չի նախատեսվել:

17. Սոցիալական որոշ խմբերի 1.5-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության ապահովում

2025թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով նախատեսվել է 20,661.7 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորվել է 20,661.7 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

18. Մասնագիտական զարգացման – վարձատրության փոխկապակցված համակարգի ներդրում՝ նախադպրոցական հաստատությունների մանկավարժների տարակարգի շնորհման գործընթաց

2025թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով նախատեսվել է 213.2 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորվել է 150.3 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը՝ 70.5%:

4. ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության պատվիրատվությամբ

-Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում

2025թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով նախատեսվել է 37,590 հազար

ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 33,911.1 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 90.21%-ով:

II. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

2025 թվականի հունիսի 30-ի դրությամբ մարզի 5 համայնքների տեղական բյուջեներով ընդամենը տարեկան եկամուտներ են նախատեսվել 1մլդ 932մլն 217հազար 2 հարյուր ՀՀ դրամ, տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտներից 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում հավաքագրվել է 1մլդ 917մլն 920 հազար 2 հարյուր ՀՀ դրամ, կամ տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտների հավաքագրումը կատարվել է 99.3%-ով: 2025 թվականի առաջին կիսամյակի համար ընդամենը եկամուտների ավել հավաքագրումը 2024 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 16մլն.606 հազար 7 հարյուր ՀՀ դրամ:

2025 թվականի հաշվետու ժամանակաշրջանի համար սեփական եկամուտներ նախատեսվել են 651մլն 669 հազար 3 հարյուր ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 635մլն 865 հազար 6 հարյուր ՀՀ դրամ կամ կատարվել է 97.6%-ով, աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կազմում է 19.8% կամ ավել հավաքագրված գումարը կազմում է 105մլն 151 հազար 5 հարյուր ՀՀ դրամ :

Ամփոփելով գանձապետական համակարգի տվյալները, 2025 թվականի հունիսի 30-ի դրությամբ մարզի 5 համայնքների տեղական բյուջներով նախատեսվել է.

- **Գույքային հարկեր անշարժ գույքից՝** Հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորվել է հավաքագրել 86 մլն 896 հազար ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 67 մլն 819հազար 1 հարյուր ՀՀ դրամ կամ կատարվել է 78.0%-ով, նախորդ տարվա համեմատ աճը կազմում է 40.1% կամ ավել հավաքագրվել է 19մլն 408հազար 1 հարյուր ՀՀ դրամ:
- **Գույքահարկ փոխադրամիջոցներից՝** պլանավորվել է հավաքագրել 157մլն 632 հազար 3 հարյուր ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 142մլն 931 հազար 2 հարյուր ՀՀ դրամ, կատարվել է 90.7%-ով, նախորդ տարվա համեմատ աճը կազմում է 4.5% կամ ավել հավաքագրվել է 6 մլն 141 հազար 5 հարյուր ՀՀ դրամ:
- **Տեղական տուրքեր՝** պլանավորվել է հավաքագրել 16 մլն 295 հազար 2 հարյուր ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 26մլն553 հազար 1 հարյուր ՀՀ դրամ, կատարվել է 163.0%-ով, նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 6.6 տոկոս կամ ավել է հավաքագրվել 1մլն 644 հազար 3 հարյուր ՀՀ դրամ:
- **Գույքի /հողի/ վարձակալություն՝** 222մլն 287 հազար 9 հարյուր ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 202մլն 637 հազար 4 հարյուր ՀՀ դրամ, կատարվել է 91.2%-ով, նախորդ

տարվա համեմատ աճը կազմել է 19.3 տոկոս կամ ավել է հավաքագրվել 32 մլն 765 հազար 2 հարյուր ՀՀ դրամ:

- **Տեղական վճարներ՝** նախատեսվել է 114մլն650 հազար 5 հարյուր ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել 100 մլն 610 հազար 9 հարյուր ՀՀ դրամ, կատարվել է 87.8%-ով:

- **Աղբահանության վճար՝** նախատեսվել է 33մլն. 185 հազար 2 հարյուր ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 31մլն 324 հազար 2 հարյուր ՀՀ դրամ կամ կատարվել է 94.4%-ով: Աճը նախորդ տարվա համեմատ կազմում է 8.6% կամ ավել հավաքագրված գումարը կազմում է 2մլն 480 հազար 3 հարյուր ՀՀ դրամ:

Համահարթեցման կարգով ՀՀ 2025թ-ի համար պետական բյուջեից մարզի համայնքներին նախատեսվել է հունվար-հունիս ամիսների համար նախատեսվել է 1մլդ. 190մլն.756 հազար ՀՀ դրամ դոտացիա, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Փորձագետ ֆինանսական վարչության պետի պաշտոնում՝ Գ.Դավթյան